

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻՍ

Տարեկան 12 ֆր.
Վեցամսեայ 6 ֆր.

ԱՐՏԱՍՈՂՄԱՆ

Երկու քիւր մէկ ծրարով
Տարեկան 14 ֆր.
Վեցամսեայ 7 ֆր.

ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 ֆր.
Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆԻԿ

Մանուկան տողը
20 սանթիմ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔԵՆԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԱՍՅԻ

Redaction du Journal

«Iraounk»

VARNA (Bulgarie)

Редакция


на ВѢСТНИКЪ

«Иравунк»

ВАРНА

Գրութիւնք եւ չեմ
տրոշիր

ԴԱՅՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԴԵՍ ԲՈՂՈՔՆԵՐ



Թիֆլիզի «Մշակ» լրագրի վերջին թիւերու մէջ բազմաթիւ գանդատական նամակներ հրատարակուած կը տեսնենք Դաշնակցութեան անդամոց կամ անոր ուղղակի հրամանին ներքեւ գործողներու գէժ:

Եթէ այս նամակաց մէջ պարզուած եղելութիւնք ստուգիւ ճիշդ այնպէս են, ինչպէս որ պատմուած են, տարակոյս չկայ որ զանոնք ընթերցողք մեծ ցաւ պիտի զգան սրտերնուն մէջ:

Մենք իբր նմոյշ այն նամակներէն միայն մինը կարտատու պենք աւելի հեռուն, որպէսզի «Իրաւունք»-ի ընթերցողները եւ կարենան գաղափար մը կողմէլ Դաշնակցութեան գէժ եղած գանդատանաց վրայ:

Այս նամակը կարգացողը ուրիշ բան չպիտի տեսնէ, այլ կարգ մը կեղծումներ, բոլոր վարմունքներ, ու անխոհեմ ընթացքներ, որք պարզապէս սկոռած են ժողովուրդը զրուցանելու յեղափոխութենէ, փոխանակ օր օրի աւելի համակրութեամբ անոր յարելու:

Մենք մինչեւ հիմայ եթէ կատարեալ հաւատ չէինք ընծայած Դաշնակցութեան իր օրկան «Իրաւունք»-ի միջոցաւ ազգային ազատագրութեան համար ըրած փայլուն խոստումներուն, գէթ կը յուսայինք որ պիտի աշխատէր ամեն հնարաւոր միջոցներով ազգայնոց ցաւերն ու տառապանքը մեղմացնելու եւ ոչ աւելացնելու: Դժբաղդաբար իր վերջին անխոհեմ եւ ապօրինի ընթացքները ցոյց կուտան, որ դաշնակցական կուսակցութիւնը ու է օգուտ ու բարիք ազգին մատուցանելու կարողութիւն ու կամք չունի:

Կը կրկնենք դարձեալ, որ եթէ «Մշակ»-ի թղթակիցներու գրածները ստոյգ են շատ ցաւալի, շատ եպերելի եւ շատ ան-

խոհեմ գործողութիւններ են, որոց ծանր պատասխանատուութիւնը Դաշնակցական մարմինն վրայ կը մնայ:

Միթէ՞ իր եղբայրներուն ցաւսելով Դաշնակցութիւնը պիտի յառաջացնէր ազգային փրկութիւն: Եթէ թուրքին մահատու ճանկերէն զանոնք կորուցելով:

Շիտակը շատ զարմանալին են մեզ համար այն ամէնը որ կըլլան ու կը գրուին:

Մենք կըսենք թէ՛ ափսոս չէ՞ հայուն որ օտարէն քաջածը իր հարազատ երբօրմէ ալ քաջէ, եւ այս կերպով այլեւս ինչ յոյս եւ ինչ ակնկալութիւն պիտի ունենայ հայը բռնական ճնշումներէ, ու զրկանքներէ ազատելու, քանի որ հաւասարապէս պիտի կրէ թէ թուրքէն եւ թէ իր հայրենակցէն:

Յոյնին առածը կըսէ, «բիւթօ լը թիւուպան քըլա թիւու» այսինքն թէ՛ աւելի լաւ է թուրքին փաթթուցը կրել, քան Պապին խոյրը:

Զգուշանք, չըլլայ որ հայը մեր յիմար գործերով զրուցընենք ու յուսահատեցնենք, պապ թէ ոչ քսանամեայ զոհողութիւնք պարապը կերթան, եւ յեղափոխութիւնը իր ձեռքով վերստին կը նետէ հայը թուրքին ձեռքը:

Հ.

ՆԱՄԱԿ ԿՐԷՏԷԷՆ

Տիար Խմբագիր,

Կարգացինք «Իրաւունք»-ի 73 թիւին մէջ Տրապիզոնի խանձիւների վատ արարքները գէպի մեր խեղճ ճամբորդների հանդէպ: Իրօք եթէ ունինք Տրապիզոնի մէջ այդ կարգի ազգաբաւերի ցաւալի եւ ըսել թէ՛ այդ պիտիներ եւս անպակաս են նաև Սելանիկի մէջ:

Թուականէս չորս ամիս առաջ Դանտիարի ազգայիններէն Աթա-նաս Պողոսեան անուն 80-85 ամեայ ծերունին հայրենիք երթալու համար կտրիպուի Աթէնքի թուրք հիւպատոսին դիմել ու

խոնարհաբար խնդրել որ շնորհք ընէ անցագիր մը տալ իրեն, սակայն թուրք պաշտօնեան կը զլանայ այդ մէկ պզտիկ բարութիւնը ընկու եւ կը մերժէ: մարդը երկրին մէջ երկար թափառելէ եւ իր ունեցանը իսպառ վատնելէ վերջ, օրին մէկը շնորհիւ իր մէկ բարեկամին կը յաջողի ապահովապէս Սելանիկ ելնել: Հոն իրեն ծանօթ Պարոն Վրդանէս Զուլուխեան տեսնելով իր հայրենակցին խեղճ վիճակը մանաւանդ գթալով անոր արեւոր հասակին, ամէն արգելք յանձնկառնէ եւ մեծ աշխատանքով հազիւ կը յաջողի անցագիր մը հանել ու հայրենիք զրկել դժբաղդ ծերունին: Սակայն օր մը յետոյ այս գործը ցաւալի հետեւանք մը կուենայ:

Տեղւոյն սրճագործներէն Թագաւոր Տէր Դրիգորեան եւ Թորոս Երամեան անուն վառ արարածները անձնական հակառակութենէ թելադրուած անխղճաբար կերթան ոստիկանութեան կը մատնեն Վրթանէս Զուլուխեանը ըսելով որ արտասահմանէն հայեր բերել կուտայ եւ կեղծ անցագրով հայրենիք կը զրկէ: Թուրք կառավարութիւնը որ բերանաբաց միշտ այսպիսի առիթներու կըսպասէ, անմիջապէս Պ. Վրդանէսը կը ձերբակալէ ու կը բանտարկէ եւ ահա այս սրիկաներու մատնութեան շնորհիւ խեղճ ծերունիը տասն եւ հինգ օր բանտարկութեան եւ 15 ոսկի տուգանքի կը դատապարտուի: Սակայն կառավարութիւնը այսչափով ալ չի բաւականանար, իսկոյն կը հեռագրէ Քէմալի կառավարութեան որ յիշեալ ծերունին հոն հասնելէն անմիջապէս յետոյ ձերբակալելով ետ վերադարձնեն, խեղճ ծերունին ամէն բանէ անտեղեակ եւ կանոնաւոր անցագիրն ալ իր ծոցը ունենալով ուրախ սրտով կը շարունակէ իր ճամբան քոսն օրէն տուն կը հասնի, սակայն քոսնը չորս ժամ հազիւ հոն կը մնայ եւ թերեւ իր սիրելիներու հետ ալ կատարեալ չը տեսնուած, յանարձ կառավարութեան անօթի

ստիկանները գիւղ կը գիմեն եւ կուղեն որ գիշեր ատեն անպատճառ քաղաք տանին ծերունիը: Գիւղին մեծերը մինչեւ լուսնալուսն մնալը կերաշխաւորեն եւ հետեւեալ օրը թշուառ ծերունին շղթայակապ քաղաք կը տանին: Խեղճը մի քանի օր հարգաքննելէ յետոյ, միեւնոյն ոստիկաններու հսկողութեամբ եւ Աստուած գիտէ որպիսի տանջանքներով Տրապիզոն կը բերեն:

Տրապիզոնի հայ պանդոկապետ Էֆէնտինիւրը որ ցարդ թուրք գամիսէրի հետ եղբայրացած համերաշխ կը գործէին մեր հայրենակիցներու վերջին լուսնի իսկ կողոպտելու համար, տեսնենք այս անգամ այդ թշուառ ծերունին զոնէ բարոյապէս օգնելու քաջութիւնը պիտի ունենա՞ն:

Բարեկամ, առաջին անգամն է որ առիթը կուենանամ սոյն երկտողս ձեզ զրկել եւ խոնարհաբար խնդրել որ հաճիք ձեր պատուական թերթի միջոցաւ հրատարակել որով մեզ խիստ շնորհակալ պիտի թողուք:

Յարգանք
Օ. փ.

ՀԱՄԵՐԱՑՈՒԹԵԱՆ
ԱՐՁԱԳԱՆՔ

Սօֆիայի Հնչտկեան մասնաճիւղս ամսոյս 18ին, չարաթ գիշեր, «Սաէտինէնիէ» նրանին մէջ սարգեց հրապարակային ժողով մը՝ «համերաշխութեան անհրաժեշտութիւնը» եւ Մուրաթի կեանքը, իր գործունէութեան առաջին օրէն մինչեւ այսօր, օրակարգով:

Ժամը 9ին արդէն 300 հոգի իրենց տեղերը գրաւած էին եւ անհամբեր կը սպասէին ժողովին բացուելուն:

Մասնաճիւղէս պոչտօնապէս հրաւիրուած եւ մասնակցելու առաջարկը սիրով ընդունած՝ քաղաքի երգեցիկ «Բնար» խումբը բացաւ ժողովը շատ կազդուարիչ ոչ կուսակցական երգով մը: Երգէն վերջ մեր համակրելի ընկեր Պ. Սարգիս Կարապետեան, ժողովին նախագահը, մէկ քանի խօսքով բացատրեց ժողովին նպատակը եւ յայտնեց թէ՛ մասնաճիւղս սոյն ժողովին

համար հրաւիրուած էր ընկեր Մովսէս Նահապետեան, Մուրաթի աքսորակիցը եւ իմացած ըլլալով Ֆիլիպէի ընկերներէն թէ՛ ընկերվարական Պ. Ս. Հինտլեան իր անձնական գործով կուգայ քաղաքս, հրաւիրեց ատենախօսելու եւ իր կարծիքը հրապարակաւ յայտնելու համերաշխութեան համար:

Նախագահի հրաւերով բեմ բարձրացաւ ընկեր Մովսէս Նահապետեան եւ հակիրճ կերպով պատմեց Մուրաթի կեանքը վեր անցնելու անոր բարոյական պաշտօնի կորովը, հոգեկան բարձր կարողութիւնները, շատ քիչ լուծ համար մատչելի եղող ուղղամտութիւնը եւ անսահման անձնաւիրութիւնը: Ետտ յաջիչ էր ընկեր Նահապետեանի պատմութիւնը մասնաւոր աքսորի եւ բանտի կեանքին պատկերները, որոնց ինքը ակնատեսն եղած է:

Նահապետեանի յաջորդեց Սրբեցիկ խումբը եւ Օր. Լեւոնոր Սեդրոսեան իր շատ յուզիչ եւ անուշ մենքագով:

Մենքագէն վերջ բեմ բարձրացաւ ընկերվարական Ս. Հինտլեան, նիւթ ունենալով Համերաշխութեան անհրաժեշտութիւնը հայ յեղափոխութեան համար:

Պ. Հինտլեան նախ յայտնեց թէ՛ ինք շատ սիրով կրնալ ընդգծմանս սուրբութիւնները, եթէ փափագողներ գտնուին:

Նիւթին գալով Պ. Հինտլեան ընդհանուր ակնարկ մը ձգեց հայ յեղափոխութեան զարգացման վրայ, քննեց անոր զանազան փուլերը եւ եզրափակեց թէ՛ յեղափոխութիւնը իր առաջին փուլին մէջ յաջողական ըլլալով այժմ անյաջողութիւններու մասերում, մտած է հայ ժողովուրդի ինքնապաշտպանութեան փուլին մէջ, բան մը գոր չուզէր մեր յեղափոխական մասնուր որչա՛կ կերպով արձանագրել:

Անյաջողութիւնը վերաբերեց ի նպաստ հայ դատի եւրոպական վճռողական միջամտութիւն մը ձեռք ձգելու գծուտութեան, եւ երկրորդ հայ յեղափոխական կազմակերպութեան մեղքերուն, իրեն գերադրելու եւ ուրիշ բանով մը անհերքելի մեղք չեղանց յեղափոխական ուժերու բաժանումը զանազան կուսակցութիւններու սկզբունքային եւ թափաքիք անհատ տարբերութիւններու պատճառակիր տակ:

Տանկահայ դատի նկատմամբ իրապէս ուրիշ սկզբունքային տարբերութիւն չիկայ կուսակցութեանց մէջ — Հնչակեան կուսակցութիւնը մեղադրեց թիւ իր բրգկրամին մէջ սօցիալիզմ դրած ըլլալուն համար եւ բաժանուողները ասով պատճառաբանեցին իրենց բաժանումը:

Երկրի մէջ գործող յեղափոխականը չէր կրնար սօցիալիստական գործունէութիւն ունենալ ու չունենալ մեղադրուելը, այնքան մեղադրելի եղան բաժանումը յաջողութիւն վերջ, ապագային պաշտօնական եւ կրօնապաշտական օրկանները:

Արդ՝ սկզբունքային տարբերութիւնը արտասահմանի մէջ աժան յեղափոխութիւն ընդունելու մէկ գրչախաղն է:

Գալով թափաքիքային տարբերութիւններուն, ցոյց տուաւ ապակեղրոնացումը եւ կեղրոնացումը: Ապակեղրոնացման բարեկամները երբեք չեն եղած ապակեղրոնացման բարեկամները երբեք չեն եղած ապակեղրոնացիալ իրենց գործունէութեան մէջ ոչ երկրի եւ ոչ ալ արտասահման: Ապակեղրոնացման կուսակցիները չեն հասկցած անոր էութիւնը, անոր նպատակն է աղատութիւն տալ իւրաքանչիւր մարմնի եւ գործիչի, ունենալ ազատ կարծիք եւ ազատ կամք իր գործունէութեան մէջ:

Թեան մէջ, ինչպէ՛ս պայմաններու մէջ իսկ գործող քաղաքական կուսակցութիւնները կեղրոնացեալ են, ոմանք խիստ կեղրով, ոմանք ռամկավարական հիմքեր վրայ:

Յեղափոխական կուսակցութիւնները անխաղաղ պայմաններուն մէջ, երբեք չեն եղած ապակեղրոնացեալ, եւ ոչ ալ կրնան գործնականապէս անկարելի է, եւ պատմութեան մէջ չիկայ ուրիշ օրինակ ինչպէս ապակեղրոնացման: Թափաքիք վրայ ապակեղրոնացումը եղած է գործնականապէս զգուշ կեղրոնացում մը: Թարական զեթաքորական կեղրոններ ստեղծելով թիցակուն չէֆէրէ եւ ընդհանուր չէֆերէ: Հոս ալ ուրիշ չիկայ ուրիշ տարբերութիւն գործող կուսակցութեանց մէջ:

Ասկէ վերջ ատենախօսող անցաւ Բաժանումի իսկական պատճառներուն, կուսակցութեանց բաժանումը սեղի ունեցած է արտասահման եւ արտասահմանական չէֆերու հրամանով: Երկրում մէջ այդ բաժանումը չէ գտած ընդունելութիւն:

Հարցերուն յաջորդեց իր բնական երեւոյթ գաղթականութիւնը, մասնաւոր ինքնապէս եւ ֆիզիքապէս անուշադրով մտաւորականներու գաղթականութիւնը, վերջիններուն հետ գաղթեցին եւ յեղափոխականներ նոյն իսկ ժողովուրդէն առաջ:

Մեր յեղափոխականները արտասահմանի մէջ հեռու եւ ազատ թշնամուտութիւն, դառն ամենալաւ միջավայրը ասպարէզ տալու իրենց անհատականութեան եւ Եսականութեան: Մասնաւորական ուրիշ ամենազարգացած անհատականութիւնը, կաղմակերպութեանց մէջ բարձր զինքներու հասնիլը գերազանց իրաւալ:

Երբ կարողութիւնները անբաւական էին հոս հասնելու, ետեւորու փութկոտութեամբ մը ի գործ դրուեցան զրպարտութիւնները, յիւրեւանները տկարութիւններ, չափագործելը, մէկ խօսքով Սեւսթըքեան դժոխային սիւստէմը: Երբ ասոնք տլ անբաւական էին մէկու մը արժանիքը նսեմացնել, ըսկզբունքային եւ թափաքիքային տարբերութիւններու հէքեթները ստեղծուեցան, — յատկաւ եկան կուսակցութիւնները:

Գաղթող մտաւորականներու մէջ մասը գրաւեց աղգային պաշտօնները եւ վաճառականական գրասենականներ, իսկ մէկ մասը ապրելու միջոցներէ զրկուած կուսակցութեանց ղեկները ափառաւ «հաց հաց կուգեմ» աղաղակելով:

«Ու անտ այսպէս յեղափոխական» «չարժու մը երկրէն, յեղափոխական» «կեղրոնէն արտասահման տեղափոխ» «ուսում, ստեղծեց ամենայնաբար միջոցները ձրականութեան եւ այն» «անբարոյականութեան, որ կը տրեք» «յեղափոխութեան արտասահմանի» «ասպարէզին մէջ»:

Ցոյց տալով բաժանումի իսկական պատճառները Պ. Հինտլեան անցաւ համերաշխութիւն գոյացնելու պայմաններու եւ միջոցներու վրայ:

Համերաշխութիւնը կայացնելու համար պէտք է անոր քայքայման պատճառները վերցնել, իսկ այդ կտրելի է այն ատեն երբ յեղափոխութիւնը կեղրոնանայ երկրի մէջ: Առանց այդ բանին կայացած համերաշխութիւնը տեւողական չըլլար եւ ոչ ալ անկեղծ:

Կուսակցութիւններուն իրար համաբերելու եւ գրկախառնումին մէջէն չէ որ պիտի ծնի համերաշխութիւնը, այլ մեծ տառերով եւ անհատում կը որւնեւրու ու տառապանքներու մէջէն է որ պիտի ծնի համերաշխութիւնը, ինչպէս ամեն ինչ նոր ծնող, որ կապիք եւ կենսունակ է:

Ընթերցելով համերաշխութեան իրականացումը, այսպէս Պ. Հինտլեան համերաշխութեան մեծ հակառակորդներ կըստաւ երբ գործնական քայլերը առնուին:

Անոնք որ այսօր համերաշխութեան կը համակրին, վաղը անոնցմէ մէկ ստուար մաս մը պիտի հակառակի, որովհետեւ կուսակցական հերոս համերաշխ գործունէութեան մը մէջ պիտի կորսնցնէ իր նշանակութիւնը եւ հետեւաբար դարձը, Իսկ գիրքէն չէ կարելի գիրքին հրաժարիլ, դա հացի խնդիր է:

Իրեն միակ միջոց համերաշխութիւնը իրականացնելու Պ. Հինտլեան մատնանց գաղափարային ժողովրդականացումը, ժողովուրդը պէտք է ըմբռնէ համերաշխութեան անհրաժեշտութիւնը, անոր համար վերջինը պէտք է ըլլայ պահանջ մը եւ ինքը իր կամքով պէտք է վճռէ հարցը՝ միշտ հակելով անոր յարատեւ գոյութեան: Ուստի Հնչակեան կուսակցութիւնը եւ անոր հետ բոլոր փափագողները պէտք է ամեն կերպով աշխատին նմանօրինակ հրապարակային ժողովներու մէջ նուազագոյն գերակցութիւն մը յառաջ բերել ժողովրդի մէջ եւ վերջը ալ նիկա իր կամքով պիտի հարկադրէ... ու անոր կամքին առջեւ ամեն ինչ անգործ է եւ տկար: Ժողովուրդը պիտի ունենայ միակ ազդու միջոցը կուսակցութեան կուսակցութեան ղեկավարութիւնը հրապարակելով ամեն կուսակցական հաստատութեան:

Երբ համերաշխութիւնը Մուրաթի սրտին եւ հոգիին մէջ այսօր բաղձանք ըլլալով, վաղը ըլլայ ժողովրդի պահանջը, այն ատեն կուգայ եւ Գոնհրէսը կազմակերպելու եւ Սանքիթնէ ղեկելու համերաշխութիւնը:

Պ. Հինտլեանի երկթամայ ատենախօսութիւնը, բուն ծափահարութիւններէ ընդհատուած յոճախ, լիքն լիքն էր անկեղծ շնչով մը, կատարեալ անաչառութեամբ մը եւ հասուն մտքերով, եւ երբ Պ. Նախագահը երկու անգամ հրաւիրեց ընդգծմանս ներքին, ներկայ հայ հասարակութիւնը 300 հոգիի չափ ծափահարութիւններով պատասխանեց այդ հրաւերին:

Վերջին անգամ ըլլալով Սրբեցիկ խումբը երգեց եւ Պ. Նախագահը յայտնելով իր շնորհակալութիւնը հաստատութեան փակեց ժողովը:

Պ. Հինտլեանի ատենախօսութեան մտքերը այնչափ մօտ էր ներկաների սրտին որ հասարակութիւնս գոհ մնալով այս ժողովէն, կը փափաքէ ունենալ ուրիշ եւ մանօրինակ ժողովներ ընտ միշտ:

Սօֆիայի Հնչակ. կուս. Մ-դի վարչութիւն

Ատենադպիր Ատենապետ Յ. ԽՐԻՍՏՈՒՄԵԱՆ Պ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

Ե. Գ. — Մէկ մէկ օրինակ ալ դորկուած են «Երիտ. Հայաստան» «Շարժում» եւ «Ռազմիկ»:

ՄԷՆԶԻԼՃԱՆ ԱՂԱՍԵԱՆ եւ Ընկ. Ի Ֆիլիպէ

Պէտք ունին զրադրի մը հմուտ պուլկարներէն լիզուի ինչպէս նաեւ Փրանս սերէնի կամ գերմաներէնի:



ԲԵԺԻՄԵՆ Է ՄԵՆԱԽՈՐ

Երկար ժամանակ է, որ ես որպէս հին դաշնակցական՝ նոր ըէժմին հակառակ՝ հեռաքրքրվում եմ դաշնակցականների գործերով... Ի՞նչ գործեր ասեմ որ չէ կատարվել մասնաւորապէս խուլ գիւղերում, եւ այնքան բազմազան են կատարված սգեղ երեւոյթները, որ կարճ խօսքով կարելի է ասել՝ յիշեցնում են «Գաղտնիք ինք» վիզիթային» արարքները, արարքներ, որոնք մեր ժողովրդին այն աստիճան ստրկացրել, նրա կուլտուրական գործին հարուած են տուել, որ չէ տարվայ անխտնջ ջանքեր են պէտք նորից նախկին աստիճանին հասցնելու համար: Այդ իմ՝ վեց տարվայ հետախույզութեան եզրակացութիւնն է:

Դժբաղդաբար մեր գիւղական ժողովուրդը կուլտուրապէս այնքան յետ է մնացել, որ յեղափոխութեան գործի համար պատրաստի հող չունի. նա երկար ժամանակ մնալով բունականների ոէժմին տակ՝ ընտելացել է ստրուկ վիճակին, այդ պատճառով հող ունենող տուեց Դաշնակցութեան բրտնակալ ըէժմին տակ ապաստանած մութ անձնաւորութիւններին ստորաւարքներին, որոնք օգտվելով հանգամանքից եւ 5—10 կօպէկ վճարելով այդ յեղափոխութեան վեց գաղափարին անարժան խճրակներին՝ միջոց ունեցան թշուառ ժողովրդին շահագործելու, հարստահարելու ոչ միայն նիւթապէս՝ այլ եւ բարոյապէս (*): Այդ բանից խրախուսված՝ կօպէկանոց յեղափոխականների թիւը ստուգաբանաւ, որտեղ աղողութիւն էր գտնուում ամեն մի թիկից փախած իր ստոր ինստիտուկաները առաջ տանելու. եւ այդ անվտանգելի անդամները կազմված խումբը՝ գործի ամբողջ ղեկը իր ձեռքն առած, անվերականգնելի կերպով անուանարկեց ընդհանրապէս հայ յեղափոխութեան անունը. ասում եմ անվերականգնելի կերպով, որովհետեւ ժողովուրդը տեսաւ յեղափոխութեան անունը կրողներին գողութեան, աւազակութեան, «ղապթիայի» եւ այլ զեւրերում եւ ստակաց ու երկրաւիթ լըռեց:

Դժբաղդաբար այդ վտանգաւոր հոսանքը այնքան զօրեղացաւ, որ ազգեց ու կուրուլթեան հասցրեց մինչեւ անգամ համալսարանաւարտները շատերին, որոնք մակերեսութեան միջանի ղէպերից օգնւորված՝ աւելի խրախուսեցին այդ մոլեգնած ամբոխին... որ եւ մի շարք ողբերգութիւններին առիթ դարձաւ: Ահա թէ ինչու չարքքը գնալով մեծացաւ եւ հրէշաւորութեան հասաւ... եւ եթէ ընդհանրապէս մաժուր, մասնաւորապէս «Մշակը» օգնութեան չը հասնէին՝ ժողովուրդը ղէպի կորուստն էր գնում մի քանի ճանապարհներով... Յեղափոխութեան երկրաւոր այն աստիճանին էր հասել, որ երբ մի փափախաւոր մարդ էին տեսնում գիւղ մտնելիս՝ ոչ միայն մեծերը, այլ անմեղ երեխաներն ան-

(*) Բ. գիւղում մի ծերունի՝ դաշնակցական հերոսների մասին բողոքելիս ասաց. «Վարժապետ ջան, հայ աղերքը էկան մեր տուն, եւ հաց պատրաստեցի, փլաւ էփիլ տուի, գառ ու զեցին՝ մորթեցի, գինի ու բախի ու զեցին՝ ճարեցի»: Եւ խօսքը կիսատ թողնելով թշուառ ծերունին՝ արտասուախառն բացականչեց. «Ախր բաւական է, վարժապետ ջան, խղճացե՛ք մեզ, մեր նամուսն էլ ձեռքէ գնաց»:

գամ «ձախուծուկ» էին մտնում, եւ այդ փափախաւորքը, թէկուզ մի 18—20 տարեկան սրիկայ լինէր, երբ մտնում էր դիւղական օդան, զառամեալ ծեւրունքներն անգամ սարսափած վեր էին թռչում տեղերից... Այդպիսի մի սրիկայ 2. գիւղում մի խեղճ ծերունու ծնծկէր Զմիմիայն նրա համար, որ վերջինս նրա ներկայութեամբ ծխելիս չէր հասկացել «մի ծխիր իմ ներկայութեամբ» հրտմանը եւ շարունակել էր:

Մի ժամանակ, երբ այս սոսկալի բեծիմը չէր ուղարկել, մի գիւղում երկու կամ երեք հոգի հազիւ ճարձկէին յեղափոխական. միայն նրանք անկեղծ էին, իսկ այժմ, ո՛ր գիւղը ուղարկէ՞ք մտքը, երեխաներից ոկոտմ մինչեւ չառամեալները յեղափոխական են (չէ՞ սր վճարում են) եւ ամենքն էլ այնքան վառ սէր են ցոյց տալիս, որ ինքն ամառում եւս այդ աստիճան ազգասէր չը լինելուդ համար. բայց էապէս սակաւ բացառութեամբ բոլորն էլ դադարած թշնամիներ են յեղափոխութեան, որ երկրորդ կեղծ գերի մէջ են մտնում: Եթէ դաշնակցական լուրջ մտորիկ հետաքրքրվել են գիւղական ժողովրդով անշուշտ համոզված են, որ այդ դուռ ճշմարտութիւն է, բայց եթէ չեն խոստովանում, անպայման իրանց սեփական հաշիւները ունեն այդ ասպարէզում: Թէեւ Դաշնակցութեան ջոշերը ակամայից խոստովանում են չաբքի գոյութիւնը, բայց արգաքանում են համարելով այն անհատական գործ, սակայն այդ արգաքանալը շատ անմիտ միջոց է: Միթէ կառավարութեան պաշտօնեաների մէջ կաշառակերները անհատներ չեն, խօս կազմը չէ առաջարկում կամ անօրինում կաշառակերութիւնը, սակայն անկեղծ յեղափոխութիւնը կուռում է այդ կազմի իւր ժիւղի դէմ: Երեւի երբ դաշնակցութեան մէջ է կատարվում միեւնոյն շարիքը, տրամաբանութիւնը պէտք է փոխել՝ անհատական համարել, որպէսզի չէփեղը չը կոտորվեն եւ անսխալական հոշակվին ժողովրդի մէջ շարիքների առիթ լինելով հանդերձ: Մի՞թէ կարելի է ուրանալ, որ միմիայն թիփմն է միջոց տալիս կեզտոսներին ու չահամոռններին ջուրը պղտորել եւ ձրթակերներին արտօմակները գրգռում: Հաւատացէ՛ք, դաշնակցութեան ղեկավարներ, ձեր այդ բռնած ընթացքով գոնէ միղանում շատ անմեղ, մաքուր պատանիներ գաղաւթացան, գող ու աւաղակ դարձան, 17—18 տարեկան պատանիներ մարդասպան դարձան եւ այժմ բանտերում փոռում են: Սոսկալի է չէ՞:

Միթէ այդ բոլորը չեն նկատում Դաշնակցութեան ղեկավարները. երբ, կարելի է ասել, ամբողջ մամուլը ձայն է բարձրացրել այդ միեւնոյն շարիքի դէմ, սակայն հայի ետը, հայի, սր ընտանեկան-հիմնական կրթութիւնից զուրկ լինելով՝ որքան սովորում է՝ դարձեալ չէ կրթվում, մնում միեւնոյն բիրտ եսականութեան մէջ, —այդ առիծված ետը մեր մէջ այնքան հաստ է, որ միայն մութօով կարելի է ճնշել եւ ոչ գրական խօսքով: Այդ մարդիկը գոնէ խղճային մեր ազգին եւ մի նոր ճանապարհ սկսէին, որով ոչ միայն ժողովրդին կը փրկէին բարոյական զրկանքներից, այլ եւ կորստից:

Կազմվան Մ. Գաղաթեան

«ՄՇԱԿ»

ՍԵՆ ԽՈՒՄԲԵՐՆ Ի ԲՈՒՍԻՍԻՍ

Կուզէ՛ ընթերցողը իմանալ թէ Յարական թերթերից մի կուսակցող քանի խաւարային խուժեր ու գոմիթէներ կազմուած են եւ կը գործեն այս միջոցին Ռուսիոյ մէջ ընդգէմ ազատական շարժմանց:

Ահա անոնց գլխաւորներուն ցանկը. Պաշտպանութեան ընկերութիւն Նուիրական ընկերութիւն Ժողովրդեան անձնական պաշտպանութեան համար Միապետական կուսակցութիւն Ռուս եղբայրութիւն Ռուսական ժողով Ընկերութիւն Նուս ժողովրդեան ընկերութիւն Հայրենասիրաց դաշնակցութիւն Հայրենասիրական դաշնակցութիւն Ազգայնական ընկերութիւն Կեզոնական ժողովրդեան կուսակցութիւն

Վիէշի ուսաց կուսակցութիւն Յեղափոխութեան եւ անիշխանականութեան դէմ գործնական պատերազմողաց կուսակցութիւն Տնտեսական կուսակցութիւն Կրօնական զբօսակ կրողներու ընկերութիւն

Պատուաւոր հայրենասիրաց եւ հայրենաց համար պատերազմողաց կուսակցութիւն:

Ռուս հայրենասիրաց ընկերութիւն: Սպիրտակ զրօշակրաց ընկերութիւն Հայրենաց եւ կրօնական կեանքի դարթուցման համար ջանադողաց ընկեր: Ձաբի եւ ժողովրդի համար ընկերութիւն

Եղբայրակցութիւն ազատութեան եւ կարգապահութեան միջիւ

Հին ուսաց հայրենասիրական կուսակցութիւն

Օրինաւորութեան եւ կարգապահութեան ընկերութիւն:

Ահա այս յետադիմական ընկերութիւնները յօգուտ բռնաւոր ինքնակալութեան կը գործեն, ուստի դարմանալի չէ եթէ սահմանադրաւոր ազատականք մեծ դժուարութեանց կը բաղխին իրենց նպատակի յառաջման համար աշխատած «տեղերին»:

Ա. Զ. Դ.

Տէր եւ Տիկին Յակոբեանները պատու ունին յարգոյ թատերասիրաց յայտարարել թէ՛ իրենց Տնօրէնութեան ներքեւ եղող «ՕՐԻՍՆԻՍԻՍ» թատերախումբով՝ որ հին «ՎԵՍԵԼՈ» ու «ՆԱՏԵՏՏԱ» թատերախմբերու ծանօթ ու սիրուած դէմքերէն Պրն. Ե. Երամեանի, Լ. Եաքարեանի եւ Մ. Թաչճեանի օգտնողակ աշխատակցութեամբ լրացած եւ կատարելագործուած է: Ի մտոյ Ֆիլիպէ պիտի ժամանեն հոն միամեսայ շրջան մը ոլորելու համար իրենց բարոյալից թատերադերձերով ու խիստ ծիծաղաշարժ դաւելաներով:

Ծուսով ենք որ ինչպէս որ կըցած ենք ամեն կերպով յարգոյ թատերասիրաց ծափին ու գրուատիքին արժանանալու մեծ քաջակրօնութեան գրտնիւ, այս անգամ ալ մեր այս անխոնջ աշխատութեան յարգն ու արժէքը ճանչցուելով չպիտի զլացուի պէտք եղած քաջակերանքն ու աշխատութիւնը:

Տէր եւ Տիկ. Յակոբեաններ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

ԱՐՄՏԻՔ

Պուլկարիոյ ներկայ 1906 թ արժեանքի բերքի քանակութիւնը բաղդատմամբ անցեալ 1905 թ տուած արդեանց հետ 8,208,534 հէքթօլիտր աւելի եղած է ըստ հետեւեալ մանրամասնութեան.

	1905ին	1906ին
Հէքթօլիտր		
Գարի	1,853,562	3,804,684
Այլեւայլ	1,302,594	1,352,553
Հաճար	1,850,053	2,747,925
Ցորեն	10,898,597	14,989,107
Վարսակ	408,775	2,727,877
Գումար	16,313,582	24,522,116

ՇԱՔԱՐ

Ամբողջ Եւրոպայի մէջ ներկայ 1906 թ շաքարի բերքը բաղդատմամբ անցեալ 1905 թ արդեանց եղած է.

1905ին	7,839,263	թօնօ
1906ին	6,844,980	»

որ ըսել է մէկ միլիոն թօնօյի չափ պակաս:

Իոկ ամբողջ աշխարհիս մէջ շաքարի արտադրութիւնը եղած է

1905ին	12,143,799	թօնօ
1906ին	11,834,000	»

ԱՄԵՐԻԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ
ՖՐԷԶՆՕԻՒՄԷՂ

Քանի մը ամիսներէ իվեր էր որ նահանգիս եւ գաւառիս ընտրութեան շուրջը ահագին մըրքուցումներ տեղի կուենեային: Ինչպէս տեղացիներ նոյնպէս եւ հայ քաղաքացիներ իրենց բաժիններն ունեցան, բայց բաղդատաբար հայերու հետաքրքրութիւնը շատ ու շատ մեծ եղաւ: Այս անմիաբան կարծուած հայերը շուտով միացան Հայ Քաղաքացի Ակումբին առաջնորդութեանը տակ, եւ իրենք իրենց մէջ ամփոփ ծրագիր մը կազմելէ եւ գաղափարներ փոխանակելէ վերջ, վարչութեան միջոցով դիմեցին երկու կուսակցութիւններու — հանրապետականներու եւ ռամկավարականներու — գլխաւոր Յանձնախմբին եւ խնդրեցին որ իւրաքանչիւրը ժողով մը սարքէ ու բացատրէ իր ուղղութիւնը: Անոնք սիրով ընդունեցին եւ առաջին ժողովը տեղի ունեցաւ հտնրապետականներու կողմանէ: Բոլոր ընտրելիները ատենախօսեցին եւ խոստացան որ, եթէ իրենց ընտրութիւնը լաշուղուի պիտի ջանան բառեալ գաւառիս ու նահանգիս բոլոր չարիքները, որ ամէն տեղ հանգստութիւն եւ երջանկութիւն ախրէ, Իւրաքանչիւր ատենախօս կը ջանար նոր նոր բառերով գովեստներ չըռալիլ Հայերուն, եւ մենք հայերս ծափահարութեամբ պա-

տասխանեցինք այս բոլորին: Երկրորդ ժողովը ռամկավարականները գումարեցին ու ասոնք ալ իրենց բաժինը կտտարելու մէջ առաջիններուն չափ ճարպիկ էին Մենք ալ վարուեցանք ասոնց հետ նոյն քաղաքավարութեամբ: Հետեւեալ օրը, նոյ. 6, որ ընտրութեան օրն էր հայերը միացեալ բառն ճիգով աշխատեցան իրենց քուէները տալ ճշմարիտ եւ ուղիղ անձնաւորութիւններու, մանաւանդ հայաստաններու յիւրախ եւ ըսելու որ հայերը յաջողեցան Տեղացիները կըսէին թէ հայոց քուէն որ կողմը սր երթայ այն կողմը պիտի յաջողի, անանկ ալ եղաւ ու մեր բարեկամը որ «Ձայն Հայրենեաց»ի եւ «Արմէնիայի ընթերցողներուն ծանօթ է, դատաւոր Չըրչը, վերստին ընտրուեցաւ: Տեղացիներու զարմանքը շատ մեծ եղաւ, որովհետեւ առաջին անգամ էր որ հայերուն միացեալ գործունէութեան կը հանդիպէին: Տեղն է որ մտածեն թէ հայ քաղաքացիներ իր քուէի յարդը գիտէ եւ իր քաղաքացիական պարտականութիւնը կը ճանչնայ, իր բարեկամները կը գնահատէ, ու թշնամիները չարտչար կը պատժէ:

Կեցցէ Յրէզնօի Հայ Քաղաքացիական Ակումբը:

Ընտրութիւնը վերջացաւ, օտարներ իրենց դասը առին, բայց ցանկալի է գիտնալ թէ Հայերս ի՞նչ սորվեցանք: Երբ 250 քուէն միանալով իր ուղածը կընտրէ, այն ժամանակ չէ՞ք կարծեր որ Յրէզնօի 5000 հայերը շատ աւելի բաներ կարող են ընել, թէ որ սիրտ ու կամք ունենան:

«Ձայն Հայրենեաց»

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ
ԱՄՍԱԹԵՐԹ

Բաժանորդագիրն
Պուլկարիոյ համար տարեկան 10 ֆր.
Արտասահմանի » » 12 ֆր.
Խմբագիր Կ. ԳԱԼԱԹԵԱՆ
Ուրիցա նովա Նապօմա, 2. Զիֆտիք
թիւ 29 Ռուստուկ

ՕԹԷԼ ՍԱՄՍՈՆ
ԱՂԷՔՍԱՆՏՐԻԱ

ճուրի քեպուճաի դէն քիւ 18

Տիար Ս. Շէքերեանի վարչութեան տակ գտնուող այս ծովագիւղայ եւ օդաւտ պանդօկը իր մաքրութեամբ եւ ամեն կատարելութեամբ յանձնարարելի է մէր հայրենակիցներուն: Այցեւուն հոն կը գտնէ նաեւ մաքուր ճաշարան մը արեւելեան եւ եւրոպական ճաշակով մաքուր եւ համաթամ կերակուրներով: Գիւղերը չափաւոր են:

Ի Լ Ա Ն

Դրսա պիր եօլճըլըդ միւնապէթի իլէ՝ կազէթամըզըն թիւրքճէ գըսմը եալընըզ 2—3 նօմէրօ իշիւն էրմէնիճէ եազըլտըզընաան տօլայը ապօնէլէրի միզին ափլընը իսթիրհամ իտէրիզ:

ՍՈՒԼՓԱՆԻ ՄԱԼԸ ՈՒՋՈՂՆԵՐ

«Քուրիէ էօրօքէնի» մէջ կը կարգանք հետեւեալը:

Ամբողջ թուրքիա Սուլթանի մահուան կը բաղձայ: Երբ օտար, մանաւանդ գերմանական մամուլը կըսէ, թէ թուրքերը իրենց վեհապետին մահուան վըտանգէ խախտուին համար մեծ գոհունակութիւն կարտայայտեն, այս խօսքը երկտեղի ներկայացուցիչներու կողմէ անաշուք պատրաստուած և գրամով հրատարակուած խօսք է, որուն ճիշդ հակառակը պէտք է հասկնալ:

«Եւ արգարեւ ամբողջ թուրքիան» — բացառութիւն ընելով թուրք չեղող ազգերը — միաբան համաձայնութեամբ մը՝ անհամբերութեամբ և հաղիւ քողարկեալ ուրտխութիւնով մը կապասէ այն վայրկեանին, յորում օսմանցւոց սովորութեան համաձայն երեսուն թնդանթի հարուածներ պիտի գուժեն Բատիշահի մահը:

«Օրէ օր քաղաքականութեան մէջ զարգացող թուրք ազնուականութեան միջավայրի մէջ, երկու ամիս առաջ ելած մահուան լուրը այնպիսի ուրախութիւն մը յարոյց, որ հազիւ կարելի եղաւ ծածկել: Մենք հաստաապէս գիտենք որ մի քանի փաշաներու եւ պէյերու տուներու մէջ, որոնք պալատին հետ գաղտնի յարաբերութիւններ ունին, պատրաստուած էին իրենց Սուլթանէն աղաւտուած խնջոյքներով տօնել: Եւ երբ վերջին Բամաշանը սկսաւ յորում սովորութիւն կայ ամէն օր 12 անգամ թնդանթ նետել, սրտի բաբախմամբ և անհուն ուրախութեամբ կապասէին Պօլսոյ բնակիչները, որ 13րդ հարուածը նետուէր, որպէս զի 17 ալ նետուելով միսթարուէին մեծ գոհունակութեամբ սրտի:

Դուցէ հարցնէ մէկը թէ ինչո՞ւ համար Ապտիւլ Համիտի մահը թրքական ժողովրդեան, մանաւանդ անոր բարձր դասակարգին մէջ միսթարութիւն պիտի պատճառէ:

Ասոր պատճառն այն է որ երկար Քէօշկը ամբողջովին Արեւմտեան երկրի ձեռքն է, և բոլոր Սուլթանի չուրջը և վերին պաշտօնէութիւնը անոնք գրաւած են:

Արպանական քամարիլան տալարի, ամբարտաւան և բռնա-

ւոր է: Կարելի չէ ս'չ մի ընդդիմութիւն ընել անոր: Այս կամարիլայի պատճառաւ է որ այս վերջին տարիներու մէջ Բ. Դուռը և ո'չ մի բարենորոգում կրցած է ընել:

Ապտիւլ Համիտ միշտ սիրելով բացարձակական ընթացքը, կամաց կամաց հեռացուց յառաջագիմական անձերը և այսպէս ալպանացւոց ձեռքը մնաց, որոնք անոր ողորմածութեան ամենափոքր կայծը իսկ մարեցին իրեն սրտին մէջ:

Իսկ հիմայ որ քաղցկեղը կամաց կամաց զինքը գետնահարելով երթալու վրայ է, Արեւմտեան երկրի կը մղեն զինքը առողջ երեւնալու, անկողնէն ելնելու, տիբլումթներ ընդունելու և ուրբաթ օրերը Սէլամըք երթալու:

Այն օրը որ երեսուն թնդանթի հարուածները Պօլսոյ մէջ պիտի լսուին, հարկաւ երկտեղի մէջ արեւալուսններուն իշխանութեան վերջաւորութիւնը պիտի ըլլայ, եթէ Պիւրհանէտտինը գահը բարձրանալով ընդհանուր յոյսերը պարապը չը հանէ և այս չարաշուք ընթացքը չփոխուի:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԽՈՒՐԲԻԱ

Սուլթանը երկու անտուկ լեցուած թանկադին գորգեր ընծայ զրկած է Խալիլոյ թագաւորին:

— Բ. Դուռը լուր հասած է որ ծանր անկարգութիւններ պատահած է Տրապիզոնի մէջ, Բնակիչները ոտք դրած են անձնական տուրքի գանձումը վերսկզբ սելուն պատճառաւ: Քաղաքին կառավարիչը ուզելով միջամտել ծանրապէս վերաւորուած է:

— Պօլսէն քաջուած հեռագիր մը կրիմացիներ Եփէսէնի մէջ Մահմուտ Եհանի մինչեւ Սանաին չորս քիլօմէթ հասնելով բանակաց և իր զօրաց մեծ մասը անուիկ վիճակի մէջ դրած է, ճատ վտանգաւոր դրութեան մէջ են Ֆէյզի փաշայի զօրքերը որոց ուտեստը պակսելու վրայ են, եթէ սպասուած օգնութիւնը չհասնի:

— Անգլիական դեսպանատունը ապահովագրութեանց վրայ դըրուած նոր օրէնքին գէմ բողոքած է Բ. Դրան:

Անգլիան յայտներ է թէ ինքը նախամեծար կը համարի ամբողջ անգլիական ապահովագրող գործակալութիւնները թուրքիայէն բառնալ, քան թէ յանձնառու ըլլալ անոր օրէնքին:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Թէհրանէ քաջուան հեռագրի մը նայելով Քերմանշահի մէջ

ուռմը մը պայթած է Խամայիլ խօճայի տան մէջ և խօճան ըսպանուած է:

Խուղարկութիւններ ըլլալով գտնուած չեն 30 ուռմաբ որոց ութը լեցուած է:

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Նախարարաց ժողովոյ նախագահ պ. Թէօօքիս խորհրդարանին ծանոյց, որ կառավարութիւնը քսան միլիօն ֆրանքի նոր փոխառութիւն մը կնքեց Յունաստանի Ազգային պաշտպանութիւնները ամբողջացնելու համար:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անցագրական նոր կարգադրութեան մը համաձայն, կառավարութիւնը որոշած է այսուհետեւ արգելել պուլկար գործաւորաց Ամերիկա գաղթելը:

Դանձային նախարարութիւնը Յանձնաժողով մը կարգեց Պուլկարիոյ Աքցիոններու մասին նոր եղանակ մը որոշելու և կանոնադիր մը յօրինելու համար:

Յանձնաժողովը արգէն սկսած է գործի և կանոնադիրը մինչեւ ամոռոյս վերջը պատրաստ պիտի ըլլայ:

— Շաբաթ օրը պուլկարաց անաշին գիրքին Հարիւրամեակը տօնուեցաւ Ի Սօֆիա: Այս առաջին գիրքին անունն է «Քիւրիա-քօտրօմիօն», զոր վիացքայի եպիսկոպոս Հ. Սօֆրօնի յօրինած է և հրատարակուած Ռումանիոյ Ռիմնիք քաղաքը:

Պուլկարիոյ և Սերպիոյ միջեւ յարաբերութիւնը երթալով ձեռնադրու վրայ են, ինչու որ բացի այն՝ որ անցեալները Սերպիոյ կառավարութիւնը յոյն եպիսկոպոսաց և Մակեդոնիոյ մէջ եղող յոյն հիւպատոսներու չքանչան շրջիւր էր, որմէ արգէն բաւական դժգոհ եղած էր Պուլկարիա, ահա հիմայ ալ մի քանի սերպ հրոսախումբեր յարձակած են Իւսքիւպ պուլկարաց վրայ, և մի հրոսախումբ ալ մինչեւ սահմանադիր մօտ եղող պուլկարաբնակ գիւղ մը մտեր բնակիչները հարստահարեր է:

ԾԱԽՈՒ ԳԻՐԳԵՐ

ԹԻՒՊԱՐՏ Ա. հատոր (162 էջ) 1 ֆր. Բ. » [433 էջ] 2 ֆր.

ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ կամ ՄՐՄՈՒՆՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ երկրորդ անգամ տպագրուած է ձեռագրած. Գին 1 ֆր.

ՆԵՏԱ կը պատկերացնէ Պուլկարներու նիստ ու կացը ու թուրքերէ կրած տառապանքը անոնց ազատութիւնէն առաջ. Գին 50 սանգիմ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՁՈՂԵՐ Պատկեր մը Տաճկահայաստանի իրական կեանքէն: 2 եղջերալ գին 1 ֆր.

Այս գրքերը ստանալու համար դիմել ՎԱՌՆԱ «Ի Ր Ա Ն Ք»-ի խմբագրութեան

ՀԱՅ ԴԵՂԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ Ս. ԳԱՆԱՐԵԱՆ և ԸՆԿ.

Ս օ լ ու ն ս ք ա փ ո ղ ո յ
(Պալլոգ բազար) Թիւ 524
1 ուշաթըքին ճիշտ տակը

Նոր բազուած սոյն դեղավաճառատան մէջ կը գտնուի մաքուր և առաջնակարգ դեղերու մեծաքանակ մը: Թերքէ զատ, թարմ հանքային ջուրեր, եւրոպական ամեն տեսակ ըսքէսիալիթներ, բժշկական աճառներ, քառուղիքի ապրանք վերաբերեալ բոլոր առարկաներ, երկաթէօրներ, պիպէրօններ, ջերմաչափներ եւն. եւն.

Ասոնցմէ զատ կը գտնուին նաեւ լուսանկարչութեան, ոսկերչութեան և ատհասարակ արհեստի վերաբերեալ քիմիական մաքուր բաղադրութիւններ:

Ն օ Ր Վ Է Կ Ի Ա յ Ի ձ Կ Ա Ն Ի Լ Գ

Յարգ դեղերուն սղուծմէն զօգուտ թիւն յայտնողները կը բաւէ որ անգամ մը դիմեն նոր դեղավաճառատուն, ուր ապահովաբար պիտի գտնեն զնեցուած առանձնական հետ դեղերու ընտրեալ զոյնները:

Շրջակայ քաղաքներու եւ գիւղերու մէջ դեղերու կրկնավաճառումով զբաղ զսղ խանութպաններու համար մասնաւոր դեղ:

Յանձնարարութիւնները փութով և ճշգրտեամբ կը գործադրուին:

ՆԵՐԿԻ ՆՈՐ ԳՈՐԾԱՐԱՆ ԹՈՒՍՉՈՒՔ

Ամիսէ մը ի վեր հաստատուած այս ներկի գործարանը կը ներկէ ամեն գոյրով բաժակեղէն և բրդեղէն առարկաներ, և մասնաւորապէս բամպակի մանած ներկելու համար ընդարձակ անձնարարութիւններ կը ստանցնէ չափաւոր գներով: Ինչպէս Ռուսիոյ քիմիական վաճառականներ թող հաճին անգամ մը դիմել միզ և փորձով հաստատել թէ անայլալ և մաքուր գոյներով կը ներկենք եւ յանձնարարութիւնները փութով կը գործադրենք:

Դիմել այս հասցէին

Տ. Ղուկաս Օգանեսան

ուլիցա փապոյչևա նմ.14

Թ Ո Ւ Ս Չ Ո Ւ Ք

Մ Ե Ա Կ

Օրաթերթ քաղաքական, գրական Բաժնեգիր՝ Եւրոպայի համար 30 ֆր. Ամերիկայի համար 6 տոլար, Պարսկաստանի և Ռուսաստանի համար 10 ռուպլի տարեկան:

Հասցէ՝ Խնքագրութիւն «ՄԵԱԿ»-ի Կովկաս) Թիֆլիս

ԿՈՒՋԷՔ ՀԱՄՈՎ ՀՈՏՈՎ ԾԽԱԽՈՏ ԾԽԵԼ. ԽՆԴԻՅԵՔ ԱՄԵՆ ՏԵՂ Մ. ԹՈՎՄԱՍԵԱՆ ԵՒ ԸՆԿ.Ի ԾԽԱԽՈՏ ԳԼԱՆԿՆԵՐԸ:

Одговор редакторъ А. Курбетянъ

печатница Д. Тодоровъ и С-но — Варна